ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 16.4-րդ և 16.34-րդ կետերի պահանջները,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ Գևորգ Գյոզալյանը 13.11.2014թ. գրավոր դիմել է Պալատին՝ խնդրելով իր լիազորությունները համարել վաղաժամկետ դադարեցված,

նկատի ունենալով այն, որ Պալատի կանոնադրության 16.34 կետի 1-ին ենթակետի ուժով Գևորգ Գյոզալյանի՝ որպես Պալատի խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարեցված **2014թ. նոյեմբերի 14-ից,**

ի գիտություն ընդունելով Պալատի հաշվիչ հանձնաժողովի 09.03.2013թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի (15-րդ տող) համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած (240 ձայն) փաստաբան Տիգրան Սուրենի Խուրշուդյանի (արտոնագիր թիվ 451) 21.11.2014թ. գրավոր համաձայնությունը՝ խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Գևորգ Վանիկի Գյոզալյանի լիազորությունները համարվում են դադարեցված 2014թ. նոյեմբերի 14-ից:

2. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 09.03.2013թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբան Տիգրան Սուրենի Խուրշուդյանը (240 ձայն) 2014թ. նոյեմբերի 21-ից համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Գևորգ Գյոզալյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

21 նոյեմբերի 2014թ.
թիվ 403-Ա
ք. Երևան